



ԱՄԱՎԵՐԴԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
 ԲՆԱՊԱՏՎՈՒՄԻ ԱՎԱՆՈՒՄԻ ՏԵԼԵԿՈՄՄՈՒՆԻԿԱՏԻՆ ՏՆՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ԳԳ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
 Զորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ
 հեռ (+374) 25324114, 91199324
 էլ. փոստ info_alaverdi@aarhus.am
 anushevoyan@rambler.ru

Lori, Alaverdi,
 Zoravar Andranik str.8/1, 403
 Tel. (+374) 25324114, 91199324,
 E-mail info_alaverdi@aarhus.am
 anushevoyan@rambler.ru

Ախթալայի ԼՀԿ
 Տնօրեն պարոն
 Մ. Հակոբյանին

ՍՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՎԱՆՈՒՄԻ ՏԵԼԵԿՈՄՄՈՒՆԻԿԱՏԻՆ
 Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մ. Հակոբյան, PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI


Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Ախթալայի ԼՀԿ-ին պատկանող «Նահատակ» պոչամբարի շարունակական հատվածում, որտեղ նախատեսվում է կառուցել նոր պոչամբար, կատարվում են աշխատանքներ: Ի՞նչ նպատակով են այդ աշխատանքները կատարվում:
2. Ախթալայի ԼՀԿ-ի համար նախատեսված նոր պոչամբարի կառուցման համար պատվիրված նախագիծը պատրաստ է արդյոք:
3. Արդյո՞ք սկսվել են նոր պոչամբարի կառուցման աշխատանքները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Շնորհակալություն: Նշ նպատակով են այդ աշխատանքները կատարվում:

Ալավերդու Օրհուս կենտրոնի ի պատասխանում  Անուշ Էվոյան

16.04.2015թ.